

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏՔԵՐԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Բորիս ԱՎԱԳՅԱՆ**  
տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր. առևտրային կազմակերպություն, պարտավորություն, ձեռնարկատիրական գործունեություն, ժամկետանց պարտք, ֆինանսատնտեսական ճգնաժամ

Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» հոդված 2-ի («Ձեռնարկատիրական գործունեություն») համաձայն. «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքների վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»<sup>1</sup>: Նույն օրենսգրքով սահմանված է (Հոդված 50. «Իրավաբանական անձի հասկացությունը»), որ իրավաբանական անձը այն կազմակերպությունն է, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ինչպես հայտնի է, իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք ստեղծվել են, և համապատասխանում է այդ նպատակներին: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպություններն ի-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի», եր., «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, 2011, էջ 8:


րավունք ունեն ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից<sup>2</sup>: Առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերի հետ միասին ձևավորում են ցանկացած երկրի ձեռնարկատիրության հիմքը: Նրանք տնտեսության այն հիմնական օղակները կամ բջիջներն են, որոնց միջոցով հյուսվում է տնտեսական գործունեությունը: Նրանք են ստեղծում աշխատատեղերը և ազգաբնակչությանը ապահովում աշխատատեղերով և, հետևաբար, նաև եկամուտներով, միաժամանակ ապահովելով երկրի պետական բյուջեի դրամական մուտքերի առյուծի բաժինը: Բավական է նշել, որ 2013 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդամենը եկամուտների 99.2%-ը (2014 թվականին՝ 99.1%-ը, 2015 թվականին՝ 94.8%-ը) ձևավորել են եկամուտները՝ 0.8%-ը (0.9%, 5.2%) և պաշտոնական դրամաշնորհները: Ըստ որում, եկամուտների կազմում 93.9%-ը (93.6%, 93.1%) կազմել են հարկերը և տուրքերը (մնացածը՝ այլ եկամուտները): Ընդ որում, «Հարկերի և տուրքերի» մեջ մեծ է ավելացված արժեքի հարկի (համապատասխանաբար՝ 37.7%, 38.7% և 37.0%), եկամտային հարկի (23.5%, 25.4% և 28.6%), շահութահարկի (11.7%, 9.1% և 9.0%), ակցիզային հարկի (4.9%, 4.4% և 4.3%), մաքսատուրքերի (4.3%, 4.3% և 5.4%) բաժինները<sup>3</sup>: ՀՀ կազմակերպությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի շարժի 1995-2014 թվականների տվյալների վերլուծությունից հետևում է, որ՝

➤ 1995-2014թթ. միջին տարեկան ցուցանիշներով պարտավորությունները կազմել են 926.3 մլրդ դրամ, որից ժամկետանց պարտքերը՝ 11.5 մլրդ դրամ (1.2%): Ըստ որում կրեդիտորական պարտքերը կազմել են ընդամենի 56.6%-ը (417.0 մլրդ դրամ), այդ թվում՝ ժամկետանց պարտքերը՝ 1.1% (9.9 մլրդ դրամ), իսկ ստացած վարկերի և փոխառությունների դիմաց՝ 43.4% (551.6 մլրդ դրամ), որից ժամկետանց պարտքերը 0.4% (3.7 մլրդ դրամ),

➤ 1995թ. համեմատ ՀՀ կազմակերպությունների պարտավորությունների կտրուկ աճ նկատվել է 1997թ. (շուրջ 2 անգամ՝ հասնելով 307.6 մլրդ դրամի), 1998թ. նախորդ տարվա համեմատությամբ (աճը կազմել է 2.1 անգամ՝ հասնելով 650.4 մլրդ դրամի): Պարտավորությունների աճը շարունակվել է մինչև 2001թ. (2000թ. այն կազմել է 763.7 մլրդ դրամ), որից հետո մինչև 2007թ. նկատվել է պարտավորությունների նվազում (2006թ. կազմելով 653.7 մլրդ դրամ): Սկսած 2007թ. պարտավորությունների աճը շարունակվել է (այն իր գագաթնակետին է հասել 2014թ. (2628.3 մլրդ դրամ)) կամ այդ աճը 2006թ.-ի նկատմամբ կազմել է 402.1% (տե՛ս գծանկար 1-ը):


<sup>2</sup> Նույն տեղում, էջ 26-27:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2015, էջ 103-104, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 103-104:



**Գծանկար 1.** ՀՀ խոշոր և միջին ոչ ֆինանսական ոլորտի առևտրային կազմակերպությունների պարտավորությունները 1995-2014թթ.<sup>4</sup>

Գծանկար 1-ից հետևում է, որ 1995-2014թթ. ՀՀ կազմակերպությունների պարտավորությունների վրա էական ազդեցություն են ունեցել 1997-1998թթ. և 2008-2009թթ. համապատասխանաբար ասիական և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերը: Մինչ և հետ ճգնաժամային տարիների ՀՀ կազմակերպությունների պարտավորությունների փոփոխությունները լավագույնս արտահայտում են այն սերտ կապը, որը գոյություն ունի նշված երկու երևույթների (ճգնաժամերի և պարտավորությունների) միջև: Հատկանշական է նաև, որ եթե 1995-2000թթ. պարտավորությունները (առաջին փուլ) սկսած 2000թ. կայունացել են մինչև 2006թ. ներառյալ ունեցել է կայունություն և նվազեցման շարժ (կայունացման և նվազեցման երկրորդ փուլ), ապա սկսած 2006թ. սկսվում է պարտավորությունների աճի երկրորդ փուլը, որն իր գագաթնակետին է հասել 2014թ.-ին և 2013թ.-ի համեմատ աճել է 122.3%-ով:



**Գծանկար 2.** ՀՀ խոշոր և միջին ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի կառուցվածքը, %

<sup>4</sup> Կազմվել է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա, [www.armstat.am](http://www.armstat.am):

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական տարեգիրք, եր., ՀՀ ԱՎԾ, 2015, էջ 392, ՀՀ վիճակագրական տարեգիրք, եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 395, ՀՀ վիճակագրական տարեգիրք, եր., ՀՀ ԱՎԾ, 2011, էջ 402, ՀՀ վիճակագրական տարեգիրք, եր., ՀՀ ԱՎԾ, 2007, էջ 382, ՀՀ վիճակագրական տարեգիրք, եր., ՀՀ ԱՎԾ, 2003, էջ 414, ՀՀ վիճակագրական տարե-գիրք (1997,1998) 2001, եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 366:


Այսինքն, եթե «ասիական» ճգնաժամը սկիզբ առնելով 1995թ.-ից 5 տարի հետո «կայունացել» և սկսել է կորցնել իր «թափը», մինչդեռ 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի «հանկարծակիությունը» նախաճգնաժամային կարճ ժամանակահատվածն է եղել (2006-2008թթ.), մինչդեռ պարտավորությունների աճը շարունակվել է 2008-2014թթ.-ին՝ ունենալով ավելի արագ աճի (կտրուկ) տեմպ:

Այսպիսին է փոքր և բաց տնտեսությունն ունեցող երկրների «ճակատագիրը» ժամանակակից գլոբալ աշխարհում, որտեղ բարձր են տնտեսական ինտեգրվածության և փոխկապվածության հարաբերությունները: Ուստի անհիմն և փաստարկված չէին ժամանակի վարչապետերի կարծիքներն այն մասին, որ տնտեսական ճգնաժամերը չեն առնչվի ՀՀ տնտեսությանը, քանի որ նա թույլ է ինտեգրված համաշխարհային տնտեսությանն ընդհանրապես և արժեթղթերի շուկային մասնավորապես: Մինչդեռ իրականությունն այլ է, իսկ դրա դրսևորման եղանակներն էլ ակնառու են: Այս պարզ ճշմարտությունը պետք է հասկանալ և առաջիկայում մասն դեպքերում հաշվի առնել և մշակել համապատասխան հակաճգնաժամային ծրագրեր (ինչը մեզանում երկու դեպքում էլ չարվեց, նկատի ունենք այդպիսի ծրագրերի հաստատումը (ընդունումը) ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենքի տեսքով): Ավելին, ՀՀ առևտրային կազմակերպությունները հանձնվեցին տնտեսական ճգնաժամերի տարերքին, ինչի արդյունքում դրանք հայտնվեցին պարտավորությունների «թակարդում»: Այն, որ 2008-2009թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամն ունեցավ ավելի մեծ «խորություն» (նկատի չունենք միայն ՀՆԱ-ի 14.1%-ոց անկումը 2009թ.-ին և հետագա տարիներին տնտեսական աճի նկատելի դանդաղումը) ակնառու ձևով երևում է նաև գծանկար 3-ից: Այստեղից հետևում է, որ ՀՀ կազմակերպությունների կրեդիտորական պարտքերն ունեցել են գրեթե նույն «վարքագիծը» ինչ դրանց պարտավորությունները: Հիմնական տարբերությունն այն է, որ կրեդիտորական պարտքերը նշված ժամանակահատվածում իրենց «պիկին» են հասել 2011թ.-ին և ոչ թե 2012թ.-ին (ինչը նկատվել է պարտավորությունների ժամանակ) և, եթե պարտավորությունների ցուցանիշը 2013թ.-ին 2012թ.-ի համեմատ նվազել է, ապա կրեդիտորական պարտքերը 2013թ.-ին 2012թ.-ի համեմատ նույնպես աճել են:



**Գծանկար 3.** ՀՀ խոշոր և միջին ոչ ֆինանսական ոլորտի առևտրային կազմակերպությունների կրեդիտորական պարտքերը 1995-2014թթ.<sup>5</sup>

ՀՀ ոչ ֆինանսական ոլորտի առևտրային կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի շարժը 1995-2014թթ.-ին բերված է գծանկար 4-ում, ուր տրված է կազմակերպությունների պարտավորությունների երկրորդ բաղկացուցիչ՝ ստացված վարկերի և փոխառությունների դիմաց պարտքերը:



**Գծանկար 4.** ՀՀ խոշոր և միջին ոչ ֆինանսական ոլորտի առևտրային կազմակերպությունների ստացված վարկերի և փոխառությունների դիմաց պարտքերը 1995-2014թթ.<sup>6</sup>

<sup>5</sup> Կազմվել է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա, [www.armstat.am](http://www.armstat.am):

<sup>6</sup> Կազմվել է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա, [www.armstat.am](http://www.armstat.am):

Գծանկար 4-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ 1995-2006թթ. կազմակերպությունների վարկերի և փոխառությունների դիմաց պարտքերը թռիչքաձև աճել են հենց 1995-1998թթ. (1998թ.՝ 1995թ. համեմատ աճել է 8 անգամ), որից հետո սկսած 1999թ. մինչև 2006թ. դրանք ավելացել են 247.8%-ով: Սկսած 2007թ. պարտքերն ունեցել են թռիչքաձև աճ: Բավական է նշել, որ հիշյալ պարտքերը 2007թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են 167.4%-ով, 2009թ. նախորդ տարվա նկատմամբ՝ 160.7%-ով, 2012թ. 2011թ. նկատմամբ՝ 122.1%-ով: 2012թ. ցուցանիշը 2006թ. ցուցանիշին գերազանցել է 537.0%-ով: Այսինքն, ՀՀ կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակը (նկատի ունենք սեփական վերարտադրական ռեսուրսների, և, առաջին հերթին, դրամական միջոցների) տարեց-տարի սկսած 1995թ.-ից մոտ է եղել «ճգնաժամային» վիճակին, որը հատկապես ընդգծված երևում է 2006-2007թթ. և հետագա տարիներին: Հատկանշական է նաև, որ այդ պարտքերը շարունակել են աճել մինչև ներառյալ 2012թ.: 2013թ.՝ 2012թ. համեմատ դրանք նվազել են 5.3%-ով, իսկ 2014թ.՝ 2013թ. համեմատ դրանք նորից աճել են 127.3%-ով: Ստացած վարկերի և փոխառությունների դիմաց պարտքերը 1995-2014թթ. ունեցել են անընդհատ աճի միտում և այդ կազմակերպությունների ընդամենը պարտավորությունների կառուցվածքում 1995թ. 9.6%-ի փոխարեն 2014թ. կազմել են 74.8% (2013թ.-ին՝ 72.0%): Նույն համամասնությամբ (100%-ի կազմում) փոփոխվել են ընդամենը պարտավորությունների կազմում կրեդիտորական պարտքերը: Նկատենք նաև, որ 1995-2014թթ. ժամանակային շարքում 2014թ. ունեցել է ամենաբարձր ցուցանիշը, ինչը նշանակում է ՀՀ կազմակերպությունների ներքին վերարտադրական հնարավորությունների անկում: ՀՀ առևտրային կազմակերպությունների մասն կախվածությունը բանկային համակարգից բացատրվում է առևտրային բանկերի վարկային ներդրումների աճով: Բավական է նշել, որ ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները 1995-1998թթ. ավելացել են 257.1%-ով, հիմնականում կարճաժամկետ վարկային ներդրումների աճի հաշվին (որոնք 1997թ. կազմել են ընդամենը վարկային ներդրումների 99.9%-ը): Առևտրային բանկերի վարկային ներդրումները 1999-2006թթ. աճել են 319.0%-ով (երկարաժամկետ վարկային ներդրումների առաջանցիկ աճի հաշվին, որի հետևանքով երկարաժամկետ վարկային ներդրումները ընդամենը վարկային ներդրումների կազմում 1999թ. 49.5%-ից 2006թ.-ին հասան 63.2%-ի): Վարկային ներդրումների արագ աճ է նկատվում հատկապես 2006-2008թթ.-ին (2006թ. նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 124.1%-ով, 2007թ.՝ նախորդ տարվա նկատմամբ՝ 177.9%-ով, 2008թ.՝ 148.9%-ով): Դրանք շարունակեցին աճել հաջորդ տարիներին նույնպես և 2014թ. կազմել են 1994.5 մլրդ դրամ (ինչը 2006թ.-ի մակարդակը գերազանցել է շուրջ 8.4 անգամ, իսկ 2009թ. մակարդակը ավելի քան 275%-ով): Նշված ժամանակահատվածում դրական երևույթ

պետք է համարել առևտրային բանկերի վարկային ներդրումների կազմում երկարաժամկետ վարկերի բաժնի ավելացումը, որը 2014թ. կազմել է 82.8%<sup>7</sup>:

### **Բորիս ԱՎԱԳՅԱՆ**

#### **Առևտրային կազմակերպությունների պարտքերի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում**

*Բանալի բառեր. առևտրային կազմակերպություն, պարտավորություն, ձեռնարկատիրական գործունեություն, ժամկետանց պարտք, ֆինանսատնտեսական ճգնաժամ:*

Միկրոնակարգակում պարտքերի առաջացման և դրանց վերադարձման հիմնախնդիրը ճակատագրական է առևտրային կազմակերպության կենսունակության ապահովման տեսանկյունից: Ուսումնասիրվել են ՀՀ խոշոր և միջին ոչ ֆինանսական ոլորտի առևտրային կազմակերպությունների պարտավորությունների ու ժամկետանց պարտքերի կառուցվածքի, ստացած վարկերի և փոխառությունների դիմաց 1995-2014թթ.-ին կուտակված պարտավորությունների մասին տվյալները: Ուսումնասիրության հիմնական եզրահանգումն այն է, որ ՀՀ առևտրային կազմակերպությունների սեփական միջոցներով զարգացման հնարավորությունները սահմանափակ են:

### **Борис АВАКЯН**

#### **Проблема долгов коммерческих организаций в Республике Армения**

*Ключевые слова: коммерческая организация; обязательства; предпринимательская деятельность; просроченная задолженность; финансово-экономический кризис.*

Для обеспечения жизнеспособности коммерческой организации важной считается решение проблемы возникновения долгов и обеспечения их возвратности. Автор статьи исследовал структуру обязательств и просроченных задолженностей крупных и средних коммерческих организаций нефинансового сектора экономики, данные о накопившихся обязательствах по кредитам и займам за период 1995-2014 годы. Результаты исследования позволяют сделать вывод, что собственные ресурсы развития коммерческих организаций РА очень ограничены.

### **Boris AVAGYAN**

#### **Debt problems of commercial organizations in the Republic of Armenia**

*Key words: commercial organization, liabilities, entrepreneurial activity, overdue bill payable*

The emergence of the debt repayment problem and its solution is always being in the center of attention of economists on micro level (for commercial organizations), because of their ability to return to viability of the organization and its future fate. The author has studied the large and medium-sized non-financial sector commitments to commercial organizations, their structure and overdue receivables, payables, loans and borrowings obtained for period 1995-2014 years' debts data. The main conclusion is that the sector's own funds for the development of commercial organizations strictly limiting the opportunities they turn to bank loans.

<sup>7</sup> ՀՀ ԱՎԾ տվյալներով, [www.armstat.am](http://www.armstat.am)